ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան 2019

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

1.	*Նախաբան*	3
2.	*Լիցենզավորման գործընթաց*	3
3.	*Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում*	4
4.	*Արտահերթ ընտրություններ*	4
5.	*Հայտարարված մրցույթներ*	8
6.	*Իրավական ակտեր*	9
7.	*Միջազգային համագործակցություն*	10
8.	*Հանձնաժողովի այլ գործառույթներ*	10
9.	*Հանրային հեռուստառադիոընկերություններ*	11
9.1	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ*	12
9.2	*«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ*	12
9.3	*«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ*	13
9.4	*«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ*	13
	Հավելված 1	15
	Հավելված 2	19
	Հավելված 3	25
	Հավելված 4	27
	Հավելված 5	28

Հավելված 6 29
Հավելված 7 31

1. Նախաբան

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ հոդվածի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» (այսուհետ՝Օրենք), «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2. Լիցենզավորման գործընթաց

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործել են 100 լիցենզավորված հեռուստաընկերություն, որից 35-ը՝ վերգետնյա եթերային, 65-ը՝կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող և 18 ռադիոընկերություն:

Վերգետնյա եթերային 35 հեռուստաընկերություններից 6-ը հանրապետական սփռման են, որից 1-ը՝ վերահեռարձակում իրականացնող, 9-ը մայրաքաղաքային սփռման են, ներառյալ 3 վերահեռարձակում իրականացնող, 20-ը տարածքային սփռման են, այդ թվում 12-ը՝ տեղական (անալոգային հեռարձակում իրականացնող) հեռուստաընկերություններ (Հավելված 1):

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող 65 հեռուստաընկերություններից 18-ը գործել են Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 9-ը՝ Երևան քաղաքի, 5-ը՝մեկից ավելի մարզերի և 33-ը՝ մեկ մարզի տարածքում (Հավելված 2):

Ռադիոծրագրերի եթերային հեռարձակում իրականացնող 18 ընկերություններից 3-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 13-ը՝ Երևան քաղաքի և 2-ը՝ մեկ մարզի տարածքում (Հավելված 3):

Բացի վերոնշյալ լիցենզավորված հեռուստառադիոընկերությունների՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում գործել են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲ ընկերությունները,

ինչպես նաև միջպետական պայմանագրի հիման վրա վերահեռարձակվել են «ԱՌԷՖԱՅ» (RFI) ռադիոծրագիրը (Ֆրանսիա), ինչպես նաև «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի հեռուստառադիոծրագրերը:

Հանձնաժողովը 2018 թվականին տրամադրել է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 9 լիցենզիա, որից 4-ը՝Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 1-ը՝ Երևան քաղաքի, 1-ը՝ մեկից ավելի մարզերի և 3-ը՝մեկ մարզի տարածքում սփռման համար (Հավելված 4): Հաշվետու ժամանակահատվածում հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումներ չեն մերժվել:

2018 թվականին դիմումների համաձայն դադարեցվել է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 2 լիցենզիա և հեռուստածրագրի եթերային հեռարձակման 1 լիցենզիա (Հավելված 5), ինչպես նաև իրականացվել են լիցենզիաների վերաձևակերպման գործառույթներ:

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող ընկերություններին տրամադրվել են 19 սեփական արտադրության հեռուստածրագրերի հեռարձակման թույլտվություններ (Հավելված 6): Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին տրամադրվել է սեփական արտադրության հեռուստածրագրերի հեռարձակման ընդամենը 2 թույլտվություն: Ոչ սեփական հեռուստածրագրերի վերահեռարձակման թույլտվություն տրամադրելու շրջանակում ուսումնասիրվել են ավելի քան 390 պայմանագրեր և հեռարձակման իրավունքը հավաստող այլ փաստաթղթեր: Արդյունքում տրամադրվել են 1520 ոչ սեփական հեռուստածրագրերի վերահեռարձակման թույլտվություններ:

3. Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով 2018 թվականի ընթացքում կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ծրագրերի 2170 և տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների 1860 օրերի ուղղակի դիտարկումներ:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանների տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան, իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հանձնաժողովի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում, ինչպես նաև հեռուստառադիոընկերությունների կողմից հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու հիմքով Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների հիման վրա 2018 թվականին հարուցվել է 11 վարչական վարույթ (Հավելված 7):

4. Արտահերթ ընտրություններ

2018 թվականը Հայաստանում բեկումնային տարի եղավ, որի արդյունքում սեպտեմբերի 23-ին տեղի ունեցան Երևանի ավագանու, իսկ դեկտեմբերի 9-ին՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: Արտահերթ ընտրությունների ժամանակ Հանձնաժողովն ակտիվ աշխատանքային գործունեություն է իրականացրել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի պահանջներից ելնելով 2018 թվականին՝ արտահերթ ընտրություններից առաջ Հանձնաժողովը հաստատել է «Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը» և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»:

Ղեկավարվելով մեթոդաբանությամբ Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում՝ 2018 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 21-ը Հանձնաժողովն իրականացրել է գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող 12 հեռուստաընկերությունների և 6 ռադիոընկերությունների ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և Օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

2018 թվականի սեպտեմբերի 23-ին Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2018 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում տրամադրված եթերաժամանակի հետևյալ ցուցանիշները.

անվճար կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 269 րոպե 5 վայրկյան, վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 2215 րոպե 29 վայրկյան, հեռուստառադիոընկերությունների հաղորդումներում՝ բացառությամբ լրատվական թողարկումների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների մասնակցության ընդհանուր տևողությունը կազմել է 9181 րոպե 4 վայրկյան, հեռուստառադիոընկերությունների լրատվական թողարկումներում ընտրություններին

մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրականացված նախընտրական քարոզչության լուսաբանման ընդհանուր տևողությունը կազմել է 8011 րոպե 35 վայրկյան, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 17192 րոպե 39 վայրկյան, այսինքն, ավելի քան 286 ժամ:

2018 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովն ընտրություններին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից բողոք չի ստացել: Պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել:

Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում՝ 2018 թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 7-ը Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող 26 հեռուստաընկերությունների և 13 ռադիոընկերությունների ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և Օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2018 թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրված եթերաժամանակի հետևյալ ցուցանիշները.

անվճար կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է՝ 660 րոպե հանրային ռադիոյի եթերում, 330 րոպե հանրային հեռուստաընկերության եթերում: Ընդ որում նշված ժամանակից իրականում օգտագործվել է 369 րոպե 38 վայրկյան հանրային ռադիոյի եթերում, 317 րոպե 38 վայրկյան հանրային հեռուստաընկերության եթերում, վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 12 114 րոպե 33 վայրկյան, այդ թվում ռադիոընկերություններում 2 279 րոպե 13 վայրկյան, հեռուստաընկերություններում 9 835 րոպե 20 վայրկյան, հեռուստառադիո-ընկերությունների հաղորդումներում՝ բացառությամբ լրատվական թողարկումների, ընդհանուր տևողությունը կազմել է 30 057 րոպե, այդ թվում ռադիոընկերություններում 9 772 րոպե, հեռուստաընկերություններում 20 285 րոպե, հեռուստառադիո-ընկերությունների լրատվական թողարկումներում նախընտրական քարոզչության լուսաբանման ընդհանուր տևողությունը կազմել է 16 261 րոպե, այդ թվում ռադիոընկերություններում 2 126 րոպե, հեռուստաընկերություններում 14 135 րոպե:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ արձանագրվել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության պահանջը խախտելու 1 դեպք, որի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ:

2018 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հանձնաժողովում տեղի են ունեցել հանդիպումներ մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, այդ թվում, ԵԱՀԿ Ընտրությունների Դիտորդական Առաքելություն (ԺՀՄԻԳ) պատվիրակության ղեկավար՝ Ուրշուլա Գարեկի հետ: Քննարկումների հիմնական թեմաներն էին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների, նախընտրական քարոզարշավի և ետընտրական ժամանակահատվածում Հանձնաժողովի գործառույթները:

2018 թվականի նոյեմբերի 23-ին Հանձնաժողովը կազմակերպել էր «Ազգային ժողովի ընտրություններն ու նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա հեռարձակողների գործունեությունը» թեմայով սեմինարը, որին մասնակցում էին հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչներ, մեդիա ոլորտի մասնագետներ: Սեմինարին ներկա էին Ազգային Ժողովրդավարական ինստիտուտի (NDI) Հայաստանի ծրագրերի տնօրեն տիկին Ս.Սմութը և փորձագետ պարոն Ջ.Դ.Ֆոքսը: Նրանք ներկայացրեցին նախընտրական բանավեճեր կազմակերպելու և վարելու, քաղաքական ուժերի հետ հաղորդակցության միջազգային առաջատար փորձը:

Ազգային ժողովի ընտրությունների մասին ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում (https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/413564?download=true) նշվել է Հանձնաժողովի կատարած և դրական գնահատականի արժանացած աշխատանքը: Հաջորդիվ ներկայացնում ենք այդ զեկույցից որոշ մեջբերումներ.

«Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ բոլոր հեռարձակողները ընտրապայքարի մասնակիցների քարոզարշավի մասին իրենց եթերում ներկայացնեն «անկողմնակալ և դատողություններից զերծ տեղեկատվություն»: Ըստ օրենքի՝ ՀՌՀ-ն (Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը) պաշտոնական քարոզարշավի ընթացքում մշտադիտարկում է բոլոր հեռարձակողներին: Ողջունելի է, որ ՀՌՀ-ն լրատվական լուսաբանման վերաբերյալ օրենսդրական դրույթը մեկնաբանեց որպես պարտավորություն հեռարձակողների համար՝ ընտրապայքարի մասնակիցներին հավասար հնարավորություններ տրամադրելու, յուրաքանչյուրին հավասար տևողությամբ լուսաբանման ժամանակ հատկացնելու փոխարեն: Դրա արդյունքը եղավ քարոզարշավի առավել բազմազան լուսաբանումը:

Տարբեր տիպի քաղաքական հաղորդումները, այդ թվում՝ քաղաքական ծրագրերի ու քարոզարշավային թեմաներին նվիրված քննարկումները, նպատակաուղղված էին կուսակցությունների ու դաշինքների մասին ընտրողներին տեղեկատվություն տրամադրելուն: Դրական է, որ Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակեց 11 բանավեճ, այդ թվում ուղիղ հեռարձակմամբ՝ ընտրություններին

մասնակցող բոլոր կուսակցությունների ու դաշինքների առաջին համարների մասնակցությամբ բանավեճը»:

ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում զանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ ներառվել են միայն հետևյալ հանձնարարականները.

«1.Միջոցներ պետք է ձեռնարկվեն լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկության ապահովման ուղղությամբ՝ սահմանելով վերջնական սեփականատերերի հստակ բացահայտման պահանջ: Լրատվամիջոցների սեփականատերերի և ֆինանսավորման աղբյուրների մասին ամբողջ տեղեկատվությունը պետք է հրապարակվի:

2. Կարելի է դիտարկել ՀՌՀ-ի՝ քաղաքական լուսաբանման ամբողջական և անկախ մոնիթորինգ իրականացնելու կարողությունների զարգացման հնարավորությունը, այդ թվում՝ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ինչպես նշված է ԺՀՄԻԳ-ի նախկին հանձնարարականներից մեկում, կարելի է նաև դիտարկել մեթոդոլոգիայի զարգացման հնարավորությունը՝ թույլ տալու ամենօրյա որակական և քանակական մշտադիտարկում՝ ներառյալ լուսաբանման տոնայնությունը:

3. Իշխանությունները կարող են դիտարկել հանրային հեռարձակողների համար նախընտրական քարոզարշավի ընթացքում բանավեճեր կազմակերպելու պարտավորության սահմանում»:

Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ Հանձնաժողովը հանդես է եկել հայտարարությամբ՝ այն է, 2018 թվական դեկտեմբերի 19-ին Հանձնաժողովն իր մտահոգությունն է հայտնել «Կենտրոն» հեռուստաընկերության կողմից հետընտրական շրջանում իրականացվող խմբագրական և եթերային քաղաքականության որոշ դրսևորումների կապակցությամբ:

Հանձնաժողովը վերը նշված արտահերթ ընտրությունների ընթացքում կազմակերպել է ընտրական գործընթացների հետ կապված հանդիպումներ, սեմինարներ՝ հանրապետական, մայրաքաղաքային, մարզային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների հետ:

5. Հայտարարված մրցույթներ

Հանձնաժողովը 2018 թվականի հունիսի 23-ին հայտարարել է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ (Հանձնաժողովի կողմից 2016 թվականից սկսած սա մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման հայտարարված երրորդ մրցույթն է), սակայն 2018 թվականի դեկտեմբերի 28-ին այն հայտարարվել է չկայացած՝ սահմանված ժամկետում դիմումներ չներկայացվելու հիմքով:

Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթները չեն կայանում և Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնավոր մուլտիպլեքսորի առջև դրված պայմանների մեղմացումը (տարեկան տուրքի կտրուկ նվազեցում, ամբողջ հանրապետությունով սփռման պահանջի մեղմացում, հանրային մուլտիպլեքսի ցանցի որոշ ծավալի վարձակալության հնարավորություն, այլ) այս բիզնեսը կարող է շահավետ դարձնել պոտենցիալ ներդրողների համար: Անհրաժեշտ է մշակել և ընդունել մասնավոր մուլտիպլեքսի գործունեության նոր հայեցակարգ, օրենքում ամրագրել մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության նոր, ներդրողների համար գրավիչ պայմաններ:

Պետության օժանդակության կարիք ունեն հատկապես մարզային հեռուստաընկերությունները: Այդ օժանդակության շնորհիվ կնվազի հեռարձակողների կախվածությունը մարզային և համայնքային իշխանություններից, պետությունը տվյալ մարզի բնակչության համար անհրաժեշտ տեղեկատվական հոսքեր կապահովի:

2018 թվականին հրաժարվել է լիցենզիայից և դադարեցրել է հեռարձակումը թվային ցանցում Արագածոտնի մարզային հեռուստատեսությունը, Տավուշի մարզային հեռուստատեսությունը սնանկ է ճանաչվել և Հանձնաժողովը «Տավուշ-ՏՎ» ՍՊ ընկերությանը տրված հեռուստածրագրերի եթերային հեռարձակման լիցենզիայի գործողության դադարեցման պահանջով դիմել է ՀՀ վարչական դատարան: Չի գործում նաև Վայոց ձորի մարզային հեռուստաընկերությունը: Հանձնաժողովի կանխատեսումներով մոտակա 1-2 տարում մի քանի հեռուստաընկերություններ նույնպես կարող են հրաժարվել լիցենզիայից և դադարեցնել հեռարձակումը:

Հանձնաժողովը 2018 թվականի սեպտեմբերի 26-ին հայտարարել է թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման (սփռման տարածքը՝ ՀՀ Արագածոտնի մարզ) ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստածրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթ, սակայն 2018 թվականի դեկտեմբերի 28-ին այն հայտարարվել է չկայացած՝ սահմանված ժամկետում դիմումներ չներկայացվելու հիմքով:

6. Իրավական ակտեր

2018 թվականի ընթացքում Հանձնաժողովը գումարել է 36 նիստ և ընդունվել է 3 նորմատիվ, 107 անհատական և 2 ներքին որոշում:

Հանձնաժողովը հիմք ընդունելով օրենսդրական փոփոխությունները՝ ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-153-Ն ՀՀ օրենքը, 2018 թվականի ընթացքում ընդունել է հետևյալ իրավական ակտերը.

- 2018 թվականի մայիսի 11-ին «Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»

2016 թվականի ապրիլի 13-ի թիվ 29-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 39-Ն որոշումը,

- 2018 թվականի հունիսի 15-ին «Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները սահմանելու մասին» թիվ 50–Ն որոշումը,

- 2018 թվականի հունիսի 15-ին «Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու կարգը և հաշվետվության ձևը սահմանելու մասին» թիվ 51–Ն որոշումը,

- 2018 թվականի մայիսի 30-ին «Հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը սահմանելու մասին» թիվ 42–Ա որոշումը,

- 2018 թվականի մայիսի 30-ին «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցութային հանձնաժողովի անդամների ընտրության, մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման կարգը սահմանելու մասին» թիվ 43–Ա որոշումը:

Հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 24-ի «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցութային հանձնաժողովի անդամների ընտրության մասին» թիվ 64-Ա որոշմամբ ձևավորվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցութային հանձնաժողովի կազմը:

2018 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի դեմ դատական վարույթներ չեն հարուցվել:

Հանձնաժողովն իր դիրքորոշումն է հայտնել Հայաստանի Հանրապետության օրենքների, որոշումների, միջազգային պայմանագրերի 68 նախագծերի վերաբերյալ:

7. Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը կազմակերպել և մասնակցություն է ունեցել իր գործառույթներին առնչվող նստաշրջաններին, համաժողովներին, քննարկումներին և հանդիպումներին, առաջարկություններ է ներկայացրել ոլորտային ծրագրերի և փաստաթղթերի վերաբերյալ:

2018 թվականին Հանձնաժողովը մասնակցել է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) 47-րդ (գարնանային) և 48-րդ (աշնանային) նստաշրջաններին, Սևծովյան տնտեսական համագործակցության հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) 9-րդ տարեկան հանդիպմանը, ինչպես նաև BRAF-ի և BROADCAST EURASIA-ի հետ համատեղ իրականացվող համաշխարհային արբանյակային շոուին (Global Satellite

Show), ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված տարբեր միջոցառումներին:

Հանձնաժողովը համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ:

Կազմակերպել է Հանձնաժողովի գործունեության մասին հանրության իրազեկում՝ ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստել մամուլի հաղորդագրություններ:

Մշտական ուշադրության կենտրոնում են եղել Հանձնաժողովի մասին հրապարակումները, Հանձնաժողովի գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը:

8. Հանձնաժողովի այլ գործառույթներ

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրված 58 130 097 (հիսունութ միլիոն հարյուր երեսուն հազար իննսունյոթ) ՀՀ դրամ գումարը ապահովել են հեռուստառադիոծրագրերի հեռարձակման համար տարեկան պետական տուրքի, սահմանված ժամկետում չվճարված տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժի, վարչական իրավախախտումների համար կիրառված տուգանքների, ինչպես նաև լիցենզիաների վերաձևակերպումների համար գանձված գումարների հաշվին:

Հանձնաժողով մուտքագրվել է 604 գրություն, ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 42 դիմում-բողոք (հեռուստաընկերությունների հաղորդումների անորակ լինելու, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու և այլ), որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրական ակտերին,

2018 թվականի ընթացքում 14 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են հետևյալ թեմաներով՝ ծրագրերի կառավարման հմտություններ, բիզնես/գործարար գործընթացների վերլուծության և մշակման հմտություններ, աշխատանքային իրավունքը հանրային ոլորտում, կառավարման հոգեբանությունը պետական ծառայությունում, ՀՀ սահմանադրական բարեփոխումները և քաղաքացիական ծառայությունը օրենսդրական փոփոխությունների համատեքստում, մարդկային ռեսուրսների կառավարում, բարեվարքության ամրապնդում և հակակոռուպցիոն հմտություններ:

9. Հանրային հեռուստառադիոընկերություններ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ, «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲ և «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲ ընկերությունները հաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել են Օրենքով, իրենց կանոնադրություններով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

2018 թվականին հանրային հեռուստառադիոընկերություններն օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված

պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել են տարբեր թեմատիկ ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարելու հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները և ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

Ինչպես և նախորդ տարիներին, 2018 թվականին ևս, հանրության լայն շրջանակների ներգրավվածությամբ պատրաստվել են մի շարք հաղորդումներ, որոնց ուշադրության կենտրոնում են եղել հանրությանը հուզող խնդիրները՝ առողջապահություն, իրազեկվածություն և սեփական շահերի պաշտպանության մակարդակի բարձրացում, սպառողական իրավունք, էկոլոգիական խնդիրներ, գյուղացիներին հուզող հարցեր: Լուսաբանվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող առավել ուշագրավ իրադարձությունները: Քաղաքական և տնտեսական իրադարձությունները վերլուծվել և բազմակողմանիորեն քննարկվել են տարբեր հաղորդումների շրջանակներում: Պատշաճ կերպով իրականացվել է Երևանի ավագանու և Ազգային ժողովի ընտրությունների քարոզարշավի լուսաբանումը: Լուսաբանվել են Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովը, ՀՀ կառավարության և Ազգային ժողովի գործունեությունը, բազմաթիվ հաղորդումներ նվիրվել են Էրեբունի-Երևան 2800 տոնակատարություններին:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

<u>Հեռուստահաղորդումների հեռարձակում</u>

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ Առաջին (ՀՀ տարածքում և Արցախում) և միջազգային (ՀՀ տարածքում և տարածքից դուրս) ալիքներով:

2018 թվականին Առաջին և միջազգային ալիքներից յուրաքանչյուրի եթերում հեռարձակվել են 8 748 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

Առաջին ալիքի հեռարձակումը ՀՀ տարածքում և Արցախում իրականացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության միջոցով: Երևան քաղաքում իրականացվելէ թվային հեռարձակում HD ձևաչափով, իսկ ՀՀ մարզերում և Արցախում իրականացվել է թվային հեռարձակում SD ձևաչափով:

2018 թվականին Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հեռարձակումն արտերկրում ապահովվել է Գլոբքասթև Յութելսաթ ընկերությունների կողմից բաց ազդանշանով՝ Գալաքսի-19 և Հոթբըրդ-13C արբանյակների միջոցով, որոնց հեռարձակման ընդհանուր տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մաս՝

բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները, Հյուսիսային Ամերիկան և Հարավային Ամերիկայի հյուսիսային մասը:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում մալուխային կապուղիներով միջազգային ալիքը հեռարձակելու ուղղությամբ:

Հանրային հեռուստաընկերության միջազգային հեռուստաալիքը ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում և հարակից շրջաններում հասանելի է նաև թվային վերգետնյա չկոդավորված ալիքներով, ինչը հնարավորություն է տալիս այդ շրջաններում բնակվող ավելի քան կես միլիոն հայ բնակչությանն անվճար և դյուրին ձևով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

<u>Ռադիոհաղորդումների հեռարձակում</u>

2018 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը կատարել է ռադիոհաղորդումների արտադրության ու հեռարձակման իր առաքելությունը՝ օրական հեռարձակելով հաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» ռադիոալիք՝ 24 ժամ, «Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)՝ 24 ժամ, «Հոգևոր-մշակութային» ռադիոալիք («ռադիո ՎԵՄ»)՝ 24 ժամ, արտասահմանի և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար պատրաստվող օտարալեզու հաղորդումները՝ 3 ժամ 15 րոպե: «Առաջին ծրագիր» ռադիոալիքը հեռարձակվել է ՀՀ ողջ տարածքում օրական 24 ժամ՝ գերկարճ տիրույթի հաճախականություններով (Երևանում և հարակից շրջաններում ՝ 107.7 ՄՀց և 69.7 ՄՀց):

69.7 ՄՀց հաճախականությամբ «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերով հեռարձակվել են նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար նախատեսված ամենօրյա հաղորդումները 4 լեզուներով՝ եզդիերեն ու քրդերեն՝ 30 րոպե տևողությամբ և ասորերեն ու հունարեն՝ 15 րոպե տևողությամբ: Ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար նախատեսված լրատվական ծրագիրը աշխատանքային օրերին ռուսերենով հեռարձակվել է 107.7 ՄՀց հաճախականությամբ՝ 15 րոպե տևողությամբ:

«Իմ ռադիո» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում օրական 24 ժամ՝ 103.8 ՄՀց հաճախականությամբ: «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում՝ օրական 24 ժամ՝ 91.1 ՄՀց հաճախականությամբ:

Մերձավոր Արևելքի և ՀՀ հարևան երկրների լսարանի համար պատրաստվել և միջին ու կարճ ալիքներով հեռարձակվել են օտարալեզու հաղորդումներ 8 լեզուներով (կարճ ալիքով 4810 կՀց հաճախականությամբ՝ եզդիերեն, քրդերեն, ադրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն՝ օրական 30 րոպե, ասորերեն, հունարեն, թուրքերեն՝ օրական 15 րոպե տևողությամբ, և միջին ալիքով 1314 կՀց հաճախականությամբ՝ եզդիերեն, քրդերեն, ադրբեջաներեն՝ օրական 30 րոպե, և թուրքերեն՝ օրական 15

րոպե տևողությամբ): Մերձավոր Արևելքի և ՀՀ հարևան երկրների լսարանի համար միջին և կարճ ալիքներով հեռարձակվող հաղորդումները 8 լեզուներով հասանելի են նաև ՀՀ ամբողջ տարածքում:

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

<u>Հեռուստահաղորդումների պատրաստում</u>

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերության պատրաստած հաղորդումները ներկայացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը, երկրի արդի մշակութային կյանքը՝ թիրախ ունենալով ազգային ու համամարդկային հոգևոր բարոյական արժեքների քարոզչությունը: Առանձին հաղորդումներով ու հաղորդաշարերով ներկայացվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ դերը հայկական մշակույթի, ազգային ավանդույթների ձևավորման, պահպանման ու հանրահռչակման գործում:

Պատրաստել և հեռարձակել է 6 570 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

<u>Հեռուստառադիոհաղորդումների պատրաստում</u>

Շիրակի հանրային հեռուստառադիոն 2018 թվականին շարունակել է Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և հեռարձակել է միջինում օրական 17ժամ 50 րոպե տևողությամբ հեռուստահաղորդումներ և 24 ժամ տևողությամբ ռադիոհաղորդումներ:

2018 թվականի ընթացքում հեռարձակվել են 6511 ժամ հեռուստահաղորդումներ և 8760 ժամ տևողությամբ ռադիոհաղորդումներ:

Հանրային հեռուստառադիոընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի (www.1tv.am) միջոցով շարունակել է իրականացնել հեռարձակում իրական ժամանակում՝ հասանելի դարձնելով հաղորդումների համաժամանակյա դիտումը ամբողջ աշխարհում:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվում է նաև առցանց՝ www.armradio.am կայքէջով: Կայքէջի բովանդակությունը հասանելի է նաև անգլերենով, ռուսերենով և ադրբեջաներենով:

Հավելված 1
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2018 թվականի հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը, հեռուստածրագրի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	-
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	-
3	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 151 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ «h2» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 152 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 157 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 163 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 164 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«ԱՆՍՎԵՐ» ՍՊԸ «ԷՌ ՏԷ ԷՌ ՊԼԱՆԵՏԱ» (РТР планета) ՀԾ	Հայաստանի Հանրապետություն	N 171 28.01.2011թ. 20.01.2021թ.
ք. ԵՐԵՎԱՆ			

1	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ՀԾ	ք. Երևան	_
2	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱՐ» ՀԾ	ք. Երևան	N 148 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ «ԱՐՄՆՅՈՒՋ» ՀԾ	ք. Երևան	N 153 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«Հ3» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հ3» ՀԾ	ք. Երևան	N 156 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ «5-ՐԴ ԱԼԻՔ » ՀԾ	ք. Երևան	N 160 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «21 ԹԻՎԻ» ՀԾ	ք. Երևան	N 161 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ «ՍԻ ԷՆ ԷՆ» (CNN) ՀԾ	ք. Երևան	N 162 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ՀԾ	ք. Երևան	N 166 20.01.2011թ. 20.01.2021թ.
9	«ԱԴՎԵՐՏԱ» ՍՊԸ «ՊԵՐՎԻՅ ԿԱՆԱԼ» (Первый канал) ՀԾ	ք. Երևան	N 170 28.01.2011թ. 20.01.2021թ.
10	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ «ՌՈՍԻԱ Կ» (Россия К) ՀԾ	ք. Երևան	N 172 28.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
-	-	-	-
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀԾ	ՀՀ Արարատի մարզ	N 168 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ «ԼՈՒՅՍ» ՀԾ	ՀՀ Արմավիրի մարզ	N 158 20.01.2011թ. 20.01.2021թ.

2	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ «ԱՎԵՏԻՍ» ՀԾ	ք. Էջմիածին	N 43 12.04.2002 թ.-*
3	«ԹԵՎ» ՍՊԸ «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Արմավիր	N 47 18.04.2002 թ.-*
4	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԼՏ» ՀԾ	ք. Արմավիր	N 49 18.04.2002 թ.-*
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ՀԾ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 149 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՀԾ	ՀՀ Լոռու մարզ	N 150 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ «ՎԱՆԱՁՈՐ» ՀԾ	ք. Վանաձոր	N 48 18.04.2002 թ.-*
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ՀԾ	ք. Վանաձոր	N 58 03.07.2002 թ.-*
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՀԾ	ք. Ալավերդի	N 79 25.10.2003 թ.-*
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ «ԼՈՌԻ» ՀԾ	ք. Վանաձոր	N 83 01.11.2003 թ.-*
6	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ «ՍԼԱՎ ՄԵԴԻԱ» ՀԾ	ք. Սպիտակ	N 97 22.02.2005 թ.-*
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ «ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՀԾ	ՀՀ Կոտայքի մարզ	N 154 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ «ՀՐԱԶԴԱՆ ԹԻ-ՎԻ» ՀԾ	ք. Հրազդան	N 89 12.01.2004 թ.-*
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ «Շ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	N 165 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ «ԳԱԼԱ» ՀԾ	ք. Գյումրի	N 98 23.02.2005 թ.- *
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			

1	«ՁԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ԶԱՆԳԵԶՈՒՐ ՏՎ» ՀԾ	ՀՀ Սյունիքի մարզ	N 169 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ «ՏԱՎՈՒՇ» ՀԾ	ՀՀ Տավուշի մարզ	N 159 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ «ՔԱՄՈՒՏ» ՀԾ	ք. Նոյեմբերյան	N 81 01.11.2003 թ.-*
3	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ «ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՀԾ	ք. Իջևան	N 85 06.11.2003 թ.-*

* Նշված լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև յուրաքանչյուր լիցենզիայով սահմանված սփռման տարածքը ներառող մարզում թվային հեռարձակման նոր մրցույթի անցկացումը և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը:

Հավելված 2
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2018 թվականի հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N144 23.10.2010թ. 23.10.2020թ.
2	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N186 16.10.2012թ. 16.10.2022թ.
3	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N187 06.11.2012թ. 06.11.2022թ.
4	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N195 15.04.2014թ. 15.04.2024թ.
5	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	N 202 01.04.2015թ. 01.04.2025թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	N 205 16.09.2015թ. 16.09.2025թ.
7	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 208 24.11.2015թ. 24.11.2025թ.
8	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 211 23.03.2016թ. 23.03.2026թ.
9	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 216 30.12.2016թ. 30.12.2026թ.
10	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 218 14.01.2017թ. 14.01.2027թ.

11	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի մարզ, Սյունիքի մարզ	N228 03.10.2017թ. 03.10.2027թ.
12	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի մարզ, Լոռու մարզ	N229 03.10.2017թ. 03.10.2027թ.
13	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N252 22.12.2017թ. 22.12.2027թ.
14	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր	N 253 23.12.2017թ. 23.12.2027թ.
15	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 255 10.04.2018թ. 10.04.2028թ.
16	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու,Կոտայքի, Տավուշի մարզեր	N257 05.05.2018թ. 05.05.2028թ.
17	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N261 26.10.2018թ. 26.10.2028թ
18	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N262 04.12.2018թ. 04.12.2028թ.
ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան	N137 20.03.2010թ. 20.03.2020թ.
2	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N140 26.05.2010թ. 26.05.2020թ.
3	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան	N146 23.12.2010թ. 23.12.2020թ.

4	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N174 10.06.2011թ. 10.06.2021թ.
5	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N184 15.06.2012թ. 15.06.2022թ.
6	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
7	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	N 203 07.07.2015 թ. 07.07.2025 թ.
8	«ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան	N249 17.11.2017թ. 17.11.2027թ.
9	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 260 17.10.2018թ. 17.10.2028թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N194 11.01.2014թ. 11.01.2024թ.
2	«ՈՒԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	N225 17.09.2017թ. 17.09.2027թ.
3	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N248 16.11.2017թ. 16.11.2027թ.
4	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	N251 15.12.2017թ. 15.12.2027թ.
5	«ԴԻԶԻ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N258 06.05.2018թ. 06.05.2028թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	N147 23.12.2010թ. 23.12.2020թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N183 22.05.2012թ. 22.05.2022թ.

2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	N181 31.01.2012թ. 31.01.2022թ.
3	«ԿԻՄ-ՌԱՅ » ՍՊԸ	ք. Մասիս	N 207 09.11.2015թ. 09.11.2025թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր	N138 23.03.2010թ. 23.03.2020թ.
2	«ՀԱՈՒԶ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	N221 29.07.2017թ. 29.07.2027թ.
3	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N250 21.11.2017թ. 21.11.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	N133 07.04.2009թ. 07.04.2019թ.
2	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ք. Գավառ	N136 22.12.2009թ. 22.12.2019թ.
3	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
4	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N219 04.07.2017թ. 04.07.2027թ.
5	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N226 28.09.2017թ. 28.09.2027թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N145 23.12.2010թ. 23.12.2020թ.
2	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 206 09.11.2015թ. 09.11.2025թ.
3	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 212 05.04.2016թ. 05.04.2026թ.
4	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ԿՀ N 259 20.07.2018թ. 20.07.2028թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N177 04.08.2011թ. 04.08.2021թ.
2	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N197 20.08.2014թ. 20.08.2024թ.
3	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N198 06.09.2014 թ. 06.09.2024 թ.
4	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճըն	N 214 09.07.2016թ. 09.07.2026թ.
5	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 220 25.07.2017թ. 25.07.2027թ.
6	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N223 03.08.2017թ. 03.08.2027թ.
7	«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N254 18.01.2018թ. 18.01.2028թ.
8	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N256 05.05.2018թ. 05.05.2028թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N182 18.05.2012թ. 18.05.2022թ.
2	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N175 09.07.2011թ. 09.07.2021թ.
3	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N222 02.08.2017թ. 02.08.2027թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199 09.10.2014թ. 09.10.2024թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 201 24.03.2015թ. 24.03.2025թ.
3	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 209 29.12.2015թ. 29.12.2025թ.

4	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 213 09.07.2016թ. 09.07.2026թ.
5	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	N 215 21.12.2016թ. 21.12.2026թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
_	_	_	_
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ»ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N227 30.09.2017թ. 30.09.2027թ.

Հավելված 3
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2018 թվականի հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	**Ընկերության անվանումը, ռադիոծրագրի անվանումը**	**Սփռման տարածքը**	**Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը**
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի առաջին ծրագիր «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ»	Հայաստանի Հանրապետություն	-
2	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՋԱՆ» ռադիոծրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 230 06.10.2017թ. 06.10.2027թ.
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոծրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 231 06.10.2017թ. 06.10.2027թ.
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր	Հայաստանի Հանրապետություն	N 232 06.10.2017թ. 06.10.2027թ.
	ք. ԵՐԵՎԱՆ		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «ԻՄ ՌԱԴԻՈ»	ք. Երևան	-
2	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՎԷՄ» հոգևոր-մշակութային ռադիոծրագիր	ք. Երևան	-
3	«ԱՌԷՖԱՅ» (RFI) ֆրանսիական ռադիոծրագիր	ք. Երևան	-
4	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ռադիոծրագիր	ք. Երևան	-
5	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 233 06.10.2017թ. 06.10.2027թ.

6	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 234 06.10.2017թ. 06.10.2027թ.
7	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 235 06.10.2017թ. 06.10.2027թ.
8	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 236 06.10.2017թ. 06.10.2027թ.
9	«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ «ՓՈՓ ԷՖ ԷՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 237 06.10.2017թ. 06.10.2027թ.
10	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ «ԻՄՊՈՒԼՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 238 06.10.2017թ. 06.10.2027թ.
11	«ՖՄ-105.5» ՍՊԸ «ՀԱՅ ՖՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 239 06.10.2017թ. 06.10.2027թ.
12	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ «ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 240 06.10.2017թ. 06.10.2027թ.
13	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ «ՎԱՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 241 06.10.2017թ. 06.10.2027թ.
14	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 242 06.10.2017թ. 06.10.2027թ.
15	«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ «ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 243 06.10.2017թ. 06.10.2027թ.
16	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 244 06.10.2017թ. 06.10.2027թ.
17	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ «ԼԱՎ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 245 06.10.2017թ. 06.10.2027թ.
ՄԵԿ ՄԱՐԶ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ Շիրակի հանրային ռադիոծրագիր	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ռադիոծրագիր	ՀՀ Շիրակի մարզ	N 246 06.10.2017թ. 06.10.2027թ.

3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ռադիոծրագիր	ՀՀ Լոռու մարզ	N 247 06.10.2017թ. 06.10.2027թ.

Հավելված 4
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2018 թվականի հաղորդման

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը
1	«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 12.01.2018թ. թիվ 2-Ա որոշում	N254 17.01.2018թ.
2	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի մարզեր	ՀՌԱՀ 04.04.2018թ. թիվ 15-Ա որոշում	N255 09.04.2018թ.
3	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌՀ 27.04.2018թ. թիվ 30-Ա որոշում	N256 04.05.2018թ.
4	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր	ՀՌՀ 27.04.2018թ. թիվ 31-Ա որոշում	N257 04.05.2018թ.
5	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արարատի և Կոտայքի մարզեր	ՀՌՀ 27.04.2018թ. թիվ 32-Ա որոշում	N258 05.05.2018թ.
6	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ՀՌՀ 16.07.2018թ. թիվ 59-Ա որոշում	ԿՀ N 259 19.07.2018թ.
7	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌՀ 08.10.2018թ. թիվ 82-Ա որոշում	ԿՀ N 260 16.10.2018թ.
8	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌՀ 08.10.2018թ. թիվ 81-Ա որոշում	ԿՀ N 261 25.10.2018թ.
9	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌՀ 30.11.2018թ. թիվ 103-Ա որոշում	ԿՀ N 262 03.12.2018թ.

Հավելված 5
Հեռուստատեսության և ռադիոյի

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	**Ընկերության անվանումը**	**Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը**	**Լիցենզիայի համարը, սփռման տարածքը**	**Որոշման ամսաթիվը համարը**
1	«ԻՆՔՈՄ» ՍՊԸ	հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N210 ք. Երևան	ՀՌԱՀ 12.01.2018թ. թիվ 1-Ա որոշում
2	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում	N178 ք. Մասիս	ՀՌՀ 27.04.2018թ. թիվ 32-Ա որոշում
3	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	հեռուստածրագրի եթերային հեռարձակում	N167 ՀՀ Արագածոտնի մարզ	ՀՌՀ 15.06.2018թ. թիվ 47-Ա որոշում

Հավելված 6
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2018 թվականի հաղորդման

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Հեռուստածրագրի անվանումը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, սփռման տարածքը
1	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	«Armnews24» «Մուզզոն» «Խաղալիք» «Ֆիթնես Tv»	ՀՌԱՀ 26.03.2018թ. թիվ 14-Ա որոշում	N 211 Հայաստանի Հանրապետություն
2	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«Շանթ Մյուզիք»	ՀՌԱՀ 30.05.2018թ. թիվ 40-Ա որոշում	N 216 Հայաստանի Հանրապետություն
		«Շանթ Նյուզ» «Շանթ Քոմեդի»	ՀՌՀ 06.07.2018թ. թիվ 56-Ա որոշում	
		«Շանթ Սերիալ»	ՀՌՀ 24.07.2018թ. թիվ 63-Ա որոշում	
3	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	«Հիբրիդ Ֆիլմ» «Հիբրիդ Ռեստ» «Հիբրիդ Սպորտ»	ՀՌՀ 08.10.2018թ. թիվ 80-Ա որոշում	N 144 Հայաստանի Հանրապետություն
4	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	«ԷՖ Թիվի»	ՀՌՀ 25.10.2018թ. թիվ 86-Ա որոշում	N 195 ք. Երևան, Արարատի մարզ, Կոտայքի մարզ
5	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	«Մագնում»	ՀՌՀ 25.10.2018թ. թիվ 87-Ա որոշում	N 140 ք. Երևան
6	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	«Նուռ»	ՀՌՀ 25.10.2018թ. թիվ 88-Ա որոշում	N 253 ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր
7	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	«Ավրորա Թիվի» «Քիսս Թիվի»	ՀՌՀ 25.10.2018թ. թիվ 89-Ա որոշում	ԿՀ N 260 ք. Երևան

8	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	«Դելտա TV» «Մենք»	ՀՌՀ 14.11.2018թ. թիվ 98-Ա որոշում	N 182 ՀՀ Շիրակի մարզ
9	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ազատություն Թիվի»	ՀՌՀ 05.12.2018թ. թիվ 105-Ա որոշում	ԿՀ N 262 Հայաստանի Հանրապետություն

Հավելված 7
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2018 թվականի հաղորդման

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

հ/հ	Վարչական վարույթ հարուցելու ամիսը, ամսաթիվը	Վարչական ակտի հասցեատիրոջ (հեռուստառադիոընկերության իրավաբանական անձի) անվանումը	ՀՌՀ որոշման համարը, ամիսը, ամսաթիվը	Վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի բովանդակությունը	Վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող պահանջը
1	06.03.2018թ.	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	20.04.2018թ. թիվ 29-Ա	Հարուցված վարչական վարույթը կարճվել է	Հեռուստաընկերության կողմից «VIASAT SPORT» հեռուստածրագրի վերահեռարձակումը կատարվել է Օրենքի պահանջներին համապատասխան
2	28.03.2018թ.	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	27.04.2018թ. թիվ 33-Ա	Հարուցված վարչական վարույթը կարճվել է	Հեռուստաընկերության կողմից հեռարձակվող ՖԻՖԱ-2018 ֆուտբոլի աշխարհի առաջնության վերահեռարձակման հիմքերը ներկայացվել են և համապատասխանում են Օրենքի պահանջներին
3	30.08.2018թ.	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	30.10.2018թ. թիվ 92-Ա	Օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կիրառվել է վարչական տույժ՝ տուգանելով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով	Հեռուստաընկերության կողմից իրականացվել է ոչ սեփական հեռուստածրագրերի վերահեռարձակում՝ առանց Հանձնաժողովի թույտվության, դրանով իսկ խախտելով Օրենքի պահանջը
4	05.09.2018թ.	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	30.10.2018թ. թիվ 93-Ա	Օրենքի 60-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն կիրառվել է վարչական տույժ՝	Հեռուստաընկերության կողմից ցուցադրվել է ծխախոտի գովազդ՝ խախտելով Օրենքի և «Գովազդի մասին» ՀՀ

				տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով	օրենքի պահանջները
5	27.09.2018թ.	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱ ԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	25.10.2018թ. թիվ 90-Ա	Հարուցված վարչական վարույթը կարճվել է	Դիմումում նշված հեռուստածրագրերը հեռուստաընկերության կողմից չեն վերահեռարձակվել և Օրենքի խախտում չի արձանագրվել
6	27.09.2018թ.	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	25.10.2018թ. թիվ 91-Ա	Հարուցված վարչական վարույթը կարճվել է	Դիմումում նշված հեռուստածրագրերը հեռուստաընկերության կողմից չեն վերահեռարձակվել և Օրենքի խախտում չի արձանագրվել
7	06.11.2018թ.	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	26.11.2018թ. թիվ 101-Ա	Հարուցված վարչական վարույթը կարճվել է	Հեռուստաընկերության կողմից գրությամբ ներկայացվել է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը
8	06.11.2018թ.	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	26.11.2018թ. թիվ 101-Ա	Հարուցված վարչական վարույթը կարճվել է	Ռադիոընկերության կողմից գրությամբ ներկայացվել է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը
9	24.10.2018թ.	«ԴԱՐ- 21» ՀԵՌՈՒՍՏԱ	13.12.2018թ. թիվ 106-Ա	Օրենքի 58-րդ հոդվածի	Հեռուստաընկերության կողմից առանց

		ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ		համաձայն կիրառվել է վարչական տույժ՝գրավոր նախազգուշացում	իրավատիրոջ թույտվության ցուցադրվել է ֆիլմ՝ խախտելով Օրենքի, «Հեղինակային իրավունքի և հարկից իրավունքերի մասին» ՀՀ օրենքի պահանջները
10	09.12.2018թ.	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	22.01.2019թ. թիվ 3-Ա	Օրենքի 60-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն կիրառվել է վարչական տույժ՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով	Ռադիոընկերության կողմից հեռարձակվել է քարոզչական բնույթի հաղորդում ընտրությունների և հանրաքվեների մասին ՀՀ օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում
11	20.12.2018թ.	«ՇԱՐԿ» ՍՊԸ	22.01.2019թ. թիվ 4-Ա	Օրենքի 58-րդ հոդվածի համաձայն կիրառվել է վարչական տույժ՝գրավոր նախազգուշացում	Հեռուստաընկերության կողմից առանց իրավատիրոջ թույտվության ցուցադրվել է ֆիլմ՝ խախտելով Օրենքի, «Հեղինակային իրավունքի և հարկից իրավունքերի մասին» ՀՀ օրենքի պահանջները